

Vahan vartabed Bardizagtsi. 1880. 1880.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF. Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :

\*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.

\*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer [ici](#) pour accéder aux tarifs et à la licence

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

\*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.

\*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment passible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter [reutilisation@bnf.fr](mailto:reutilisation@bnf.fr).



1234

11. 369-270

13 APR 2011

291.99

S-46

W R U Y R



1 8 8 3

SEP 2013



39249.67

ԱՌ ՆՈՐԻՆ

ՊԱՏՈՒԱԿԱՆ ՎՍԵՄՈՒԹԻՒՆ

ԱՂԱ ՄԿՐՏԻՉ

ՍԱՆԱՍԱՐԵԱՆ

ԲԱՐԵՐԱՐ ՀԱՅՐԵՆԵԱՅ

ՉՕՆԷ

ՄԵԾԱԻ ՍԻԱՆՉԱՑՄԱՄԲ

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ



ԱՌ

ՄԵԾԱՊԱՏԻԻ ՏԷՐ

Ա.ԲԳ.Ա.Ր ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Սիրող Հայկական իմաստից եւ  
գեղեցիկ Դպրութեանց ,

Պատուական Տեր-Խմբագիր  
« ՓՈՐՉ » ընտիր ամսագրերի  
Ի ՏՖԻԻ.

Տէր բարեկամ ,

Առաւել թէ կը կրթէ ժողովուրդը  
և թէ կը զուարճացնէ . շատ ազգեր  
նշանաւոր առակախօսներ ունեցած  
են « Յոյնք Եսովպոս , Լատինք Փեդ-  
րոս , Յռանաացիք Լաֆոնդէն , Ռուսք  
Քալիլով , Արաբք Լոգման և Օսմանցիք  
Նասրէտտին : Հայք Մխիթար Գօշէն  
զատ առակախօս ունեցած չեն , որոյ

առակաները թէ սակաւաթիւ են և  
թէ շատ համառօտ :

Մեր ժամանակին գլխաւորաբար առականեր թարգմանողներ եղան միայն, որոց մէջ առաջին տեղ կը բռնէ Գեր. Գաբրիէլ Նախկոպոս Այվազեան, որ գողտրիկ և սահուն գրչով Քուիլովի առակաները թարգմանեց: Նոյնպէս Նորին Սրբազնութիւնը Հոլար և Ք. Կապուր Բան անուն Սուածագիրք մ'ալ հրատարակեց, որ գեղանշոյլ աստղիկ մի է ազգային գրականութեան երկնակամարին վերայ, զոր ամէն Հայէ ընթեռնուէ կ'արժէ ի խրատ անձին և ի շինութիւն բարոյական վիճակին իւրոյ :

Առականերն ամէն ատեն օգտակար եղած են ժողովրդեան, մանաւանդ այն ժողովրդեան՝ որ դեռ տղայ է իր ուսումնական և բարոյական վի-

ճակի մէջ: Այն մեծ իմաստասէրներն՝ որք մարդկութեան մէջ պաշտօն ունեցան յանուն մարդկային երջանկութեան, մինչև իսկ Տէր Յիսուս, յաճախ առակեցին, վասն զի առակները միայն նկատեցին ճշմարտութիւնը յերևան հանելու և ժողովրդեան մըտքին և սրտին մէջ տպաւորելու իբր անվրիպելի միջոց:

Մեր ժողովրդեան ալ ներքին կողմերը — բարոյական հանգամանքները — նկատելով՝ կը համարձակիմ ըսել թէ դեռ տղայ է, և դեռ տէր չէ ամենակատարեալ — յատկանիշ ըլլալու շափ — բարոյական մէկ վիճակի, յատուկ մէկ ձիրքի կամ հանգամանքի: Նա բարոյականի դրեթէ իւրաքանչիւրին մէջ թերի է. թերի ազգասիրութեան, հայրենասիրութեան, ընտանեսիրութեան, ըն-

կերսիրութեան, սրբկեշտ անձնասիրութեան և մինչև իսկ կրօնասիրութեան և ուսումնասիրութեան, ի մի բան՝ այն ամենուն մէջ, որովք միայն կարելի է ազնուանալ, յառաջանալ ի բարին, յօգտակարն, ի ճշմարիտն և ի հանդիսան հոգւոյ և մարմնոյ :

Արդ՝ երբ մեր այս թերի կողմերը կան, կամ ուրիշ կերպով ճիշտ քսեմ, յանուն բարոյական կենսոյ այն կէս-կէս վիճակն ունիմք, ի՞նչպէ՞ս պիտի հասնինք փրկութեան . . . : Ազգի մը մէջ կարելի է, որ մէկ ՄՆՄ մարդ ելնէ, որ ձեռնարկել խիզախէ իւր ազգի փրկութեանը նուիրական գործին, բայց Դա իւր ազգի ո՞ր մէկ ամենակատարեալ բարոյականին պիտի վստահի, որպէս զի զայն գործիք

ընելով՝ յաջողի իւր այդ. մեծ նպատակին հասնելու . . . :

Աւելորդ իսկ է բարոյականի ամենակատարեալ մէկ հանգամանք, վիճակ և ձիրք փնտուելը մեր վրայ. եթէ վնէր, ոչ նուազ մխիթարական յոյս պիտի ներշնչէր ամէն նոցա սրբտին, որք ազգային փրկութեան սիրովը կը մորմոքին. առ այս հարկ չկայ շատ մը իրողութիւններ ևս մէջ բերելու. բաւական է, կարծեմ, եթէ զմին միայն յիշեմ. այս ալ աւա՛ղ, իմ տխուր բաժինս է. չեմ ուզեր, քա՛ւ վիցի, խռովել փափուկ սրտեր, այլ ընդհակառակն օգուտ ընձեռել կը դիտեմ յանուն անձնական և ազգային բարւոյ և պատուոյ . . . :  
 վասն զի օգտակարը ճշմարտութեան յայտնութեանը, ինչպէս առաքինութիւնն ալ հոգեով և մարմնով տկարին

Տառայութեանը մէջ է, և ոչ զօրաւորին :

Մարդ մը՝ որ իւր Արամեայ հասակին մէջ ի Չէյթին լոյս կը սփռէ, ճրի՛ գրէթէ, յերուսաղէմ կ'աղօթէ և կը գրէ, հուսկ ուրեմն ի Հայաստան երիցս կը թափառի և կը գործէ. մարդ մը՝ որ իւր նուիրական կեանքը մինչ իւր առջև քանիցս կ'ախարհէ կը տեսնէ, շխուովիր, այլ անվեհեր կը դիմէ ի կէտ նստակի . . . մարդ մը՝ որ իւր ստանձնած ամէն պաշտօն ամենայն հաւատարմութեամբ և զգուշութեամբ ի գլուխ կը հանէ. մարդ մը՝ որ կը համարձակի իսկ ասել այսօր, թէ « ոչ ոք կարող է զիս յանդիմանել վասն Քրիստոսի յանուն ազգի և հայրենեաց » . կարինէն ի կ. Պօլիս կը հասնի նոյն իսկ Հայաստանը շալակելով. բայց ցարդ իսկ ոչ մէկ պատուոյ կամ շնորհի պաշտօնապէս արժանի կը լինի, մինչ-

դեռ ուրիշներ . . . ի՞նչու . — վասն  
զի առ ազգն ու առ հայրենիս ունե-  
ցած պարտուց մէջ հաւատարիմ մնա-  
լու և պարկեշտ ապրելու յանցա՛նք  
գործած էր . . . :

Ներէ՛ , ո՛ր յաւիտենականդ Արդա-  
րութիւն , ներէ՛ այդ անձին . թե-  
րևս այդու պատժել ուզէցիր զինքը ,  
վասն զի գիտեմ , որ նա առ սէր ազ-  
գի իւրոյ և հայրենեաց ամբարշտած  
էր առաջի Քո . . . :

Տէր բարեկամ , ես որ ազգին  
կեանքը խոր սերտած , քննած ու զըն-  
նած եմ , սոյն առակաները հրատա-  
րակելով՝ պարտք համարեցի դոյզն  
ինչ սպեղանի դնել մեր բարոյական  
վէրքերուն վրայ : Սոքա զուտ հայկա-  
կան են , և նմանութիւն չունին գրե-  
թէ օտար առակախօսաց առականերուն .  
երկրորդ մ՛ալ պիտի հրատարակեմ՝

Հանդերձ առաստելական զուարճալի վէպով մը Զէյթինցուոց լեզուով, Կիլիկեան Հայ աշխարհաբարի վրայ՝ փոքրը ինչ ճաշակ մը տալու համար Հայ գրագիտաց ։

Սոյն գրքոյկներն առ ո՞ պիտի նուիրէի, եթէ ոչ պատուականաց պատուական այն մեծ մարդուն՝ - ՄԿՐՏԻՉ ՍԱՆՍԱՐԵԱՆ - վեհ անուան, որոյ վրայօք դուք քանիցս գովեստիւ խօսեցայք, երբ այդք է Տփլիս էի. և ի՞նչ հարկ գովեստի խօսքերու, երբ Նորին Վսեմութեան նոյն իսկ մեծամեծ գործերն արդէն հանրահռչակ կը խօսին. ես զիս երանելի կը համարիմ, որ սոյն դուզնաքեայ նուէրս Ձեր ձեռամբ կը բաղդաւորիմ ձօնել Նորին Վսեմութեան, որ կաթոգին սիրողն է հայրենի գրոց և խօսից ։

Իսկ զՁեզ՝ Տէր, պատիւ ինձ համարիմ ողջունել այժմ, զՁեզ՝ որ զիս այդք է Տփլիս սփոփեցիք, քաջալե՛

րեցիք և յատկապէս յաճախ յորդորեցիք, որ գնամ յԱլաշկերտ և ի Պայազիա տէր լինելու համար այն Հայ ժողովրդեան, որ քամած էր պատերազմի ծանր աղէտից դառն բաժակը մինչև ցմրուր, և մաղ մնացած էր նոր դառնաղէտ փորձանքի մը ևս հասնելու աննպատակ և անպատրաստ, յիմարտական դաղթականութեան մը երեսին: Հազարաւոր ժողովրդեան մը երախտագիտութիւնն ու Աստուծոյ օրհնութիւնն բաւական իսկ են զՁեզ վարձատրելու, և դայնպիսիս ևս՝ որ Ձեր հողւոյն ու սրբտով դործեցին: Ձեր և նոցա անուններն պատմութիւնը պիտի արձանագրէ ոսկեղէն տառերով, վասն՝ զի հոն ճշմարտութիւնը կը խօսի և ոչ սուտութիւնը ընդ քողով մարդահաճոյութեան . . . :

Մնամ խորին յարգանք  
Վահան վ. Տ. Մինաս

1880 Մարտ 1  
Ի Կ. Պոլիս

Պարտիզակցի



---

ՀԱՅԿԱԿԱՆ  
ՅԻՄՆԱԿ ԱՌԱԿ

---

Ա .



Հարարյան քննական  
աստանոլ

Գրատեղի Գրատեղի  
Գրատեղի Գրատեղի

LIBRAIRIE-ÉDITEUR  
V. B. ZANTARIAN  
STAMBOUL TCHAKMAKDJIAN N. 2478



ԱՌ ՆՈՐԻՆ

ՊԱՏՈՒԱԿԱՆ ՎՍԵՄՈՒԹԻՒՒՆ

ԱՂԱ ՄԿՐՏԻՉ

# ՍԱՆԱՍԱՐԵԱՆ

ԲԱՐԵՐԱՐ ՀԱՅՐԵՆԵԱՑ

ԶՕՆԷ

ՄԵԾԱԻ ՍԻԱՆՉԱՑՄԱՄԲ

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ



41217500

# ՀԱՅԿԱԿԱՆ

ՅԻՍՆԱԿ ԱՌԱԿ



Ա. ՏՍԱՆԵԱԿ



Ա.

Սարիկ

Սարիկ յանկարծ թեիկ բացաւ՝

Մօրկան ծոցէն արագ թռաւ :

« Սարիկ, ո՛վ դու :

Էսէ, ինչո՞ւ :

Աչքսդ սէս շուտ կը թռչիս :

Սարեկիկ, չը խօսի՞ս » :

Սարիկ լռեց :

Սարիկ լռեց :

« Սարիկ, ձայնէ՛, անտան ու ձոր


Թող քո ձայնէ դ թնդ այ այսօր » :

Սարիկ լռեց :

Սարիկ լռեց :

2005. 124-160

ACQ 1993004857



« Ե՞ր այդպէս լռիկ մնջիկ  
Ար թռչիս , մատղա՛շ Սարիկ » :

Սարիկ լռեց ,

Սարիկ լռեց :

Սարիկ աչեց , « աչիկ տեսաւ ,

Ծառէն կախուած սաղիկ տեսաւ :

Հոն թռաւ ,

Թառեցաւ :

Սարկին տոտիկ սաղին դըրպաւ

Սաղին դըրպաւ , ձայնիկ ելաւ ,

« Ախ հայրենիք , »

« Ախ հայրենիք » :

Սարիկ լռեց , գլխիկ կախեց ,

Տխրալի՛ ձայն սրտէն հանեց .

« Ախ իմ բոյն , »


« Ախ իմ բոյն » :

Որսորդ ձայնն սուաւ ,

Ծառին նայեցաւ .

Սարիկ տեսաւ ,

Նըշտն սուաւ .



Սարկին զարկաւ ,  
Կարծքին զարկաւ •  
Սարիկ ընկաւ ,  
Սարիկ մեռաւ ։

Սարիկ Կապէն էր ,  
Սազիկ սրտիկն էր •  
Թռչողն Հոգին էր ,  
Երգողն սրտիկն էր •  
Հոգին Թրուաւ ,  
Սրտին դըպաւ •  
Սրտէն ձայն ելաւ ,  
Հոգւոյն աչք լացաւ •

« Ախ հայրենիք »

« Ախ հայրենիք » ։

Որսորդն հասաւ ,  
Երբ ձայնն առաւ •  
Նըշան առաւ ,  
Սրտին զարկաւ •  
Կապէն ընկաւ ,

Կապէն մեռաւ .

Կապէն բարուոյն տակ

Եղաւ նահատակ\* :



Բ .

Ռեխտաւոր Աղուես

« Ի՛նչ անուշիկ ,

Ո՛վ արջորիկ ,

Սիրուն կ'երգես » .

Կ'ըսէր Աղուէս :

« Գիշեր ցերեկ հոս մընայի ,

Գեղ գեղ ձենիկդ ես լրսէի .

Այլ շատ ափսո՛ս , որ վաղուընէ

Պատի գրկուիմ ձայնդ լրսելէ .

Ձի մեղաւորս առ Տէր ուխտի

Սուրբ Կարապետ երթայ պիտի :

---

\* Կարապետ պատանի քանակեայ ,  
որ անկաւն , երբ կրկին գնայր ի Ձէյ-  
թին ի 1870 ամի :

Ա՛խ , Աքլոր ,

Դուն այսօր

Աչքիս անցունք պիտի սրբես ,

Թէ ինձ հաւնոց առաջնորդես •

Հոն թողու թիւն մեղացս ամէն

Պիտի ուզեմ ձեր հաւերէն » :

Խաբեքային այս խօսքերէն

Աքլորին սիրտն ելած արդէն ,

Ըսաւ • « փութա ,

Հաւնոցն ահա » :

Վազեց Աղուէս , ուր կը խղղէր

Բոլոր հաւերն ու կը ժղէր •

« Ո՛վ Աքլոր ,


Գիտես սր

Գիւրին չէ երթալ ուխտի

Անպաշար ու անօթի

Այլ կուշտ

Անշուշտ » :



Կեղծ աւոր բարեպաշտօն  
Չար մարդիկ կան քանիօ՛ն  
Որք մինչև ըզմեղ խարեն ։  
Ի՛նչ անոյշ կը քարոզեն ։



Ք օ

Օձ եւ Արտոյտ

« Արտուտիկ ,  
Քո տառիկ  
Պաղնեմ ,  
Լիզեմ ։

Ախ , քիչ կենայիր ,  
Ինձ դուն լըսէիր ,  
Ապա երթայիր » ։

Այսպէս ահա օրին մին

Օձ մը կ'ըսէր Արտուտին ։

« Իրաւ կ'ըսեմ , այս խեղճ կեանքէն

Երկրի վրայ միշտ սողալն

Զգուեցայ

Զանձրացայ ։

Երբ կը յիշեմ քանի անգամ ,  
Թէ քաղաքներ , տուներ փարթ տե՛  
կան աշխարհիս ամեն կողմեր ,  
Կը քաշեմ ես որչա՛փ ախեր :  
Ա՛հ , ի՞նչ կըլլար , ով Արտուաթիկ ,  
Թէ տանկիր զիս քո հետիկ » :

« Օձուկ , շատ լաւ

Արտոյան լաւ .

« Բայց չը գիտե՞ս , որ ես ի՞նչպէս  
Հեռու տեղեր տանիմ ըզքեզ ,

Երբ մէկ պըզտիկ

Եմ ճնձուղիկ » :

— « Ասոր ճարն՝ հաւատացէք ,

Եթէ , Արտոյտ , լսելուդէք ,

Գիտեմ .

Ըսե՞մ :

— « Ըսէ , նայիմ ,

Կը հաւանի՞մ » :

— « Կը պըլլուիմ ես քո վըղին ,

Քեզ հետ մէկտեղ կերթանք դիւրու

Անենք պատոյս ,

Զըլա՞ր , Արտոյս ։ ։

Սրկար չընեմ խընդիր օձին  
Հաճոյ եղաւ մեր Արտուտին .

Եւ միասին

Սլան դային ։

Բայց շատ վայրկեան դեռ անցած չէր ,  
Օձուկն այսպէս երբ կը խորհէր .

« Միմեմ վիզը այս Արտուտի ,

Թող վար ընկնի ու սատակի .

Իսկ ես

Ըսեա

Շատ լաւ դիտեմ , որ թէ իյնամ

Սա արտին մէջ , բա՛ն մը կըլլամ ։

Ըսաւ .

Ըրաւ ։

Բայց յոյսն արդարեւ

Ելաւ ի դերեւ .

Արովհետեւ երբ վար ընկաւ ,

Իւր գլուխն ալ քարին եկաւ .

Զաղխեցաւ

Սատկեցաւ :

Երբ չար խորհիս ,

Կը պատժուիս •

Խիկարին քարոզած

Յիշէ՛ դուն այս առած

« Երբ չար դործես ,

Չար կը դռնես » :



Գ .

Կարիճ էս Գորա

Կարիճն ու Գորա

Լըճի մը քով

Խրար դտան ,

Ընկեր եղան :

Թերևս ըսես , կարելի՞ է ,

Պատի՛ ըսեմ , թէ ինչո՞ւ չէ

Բայց առ ահիս

Մտքին նայիս ,  
Կարծեմ ինչ  
Փոքր ի շատէ  
Կը յուսամ ,  
Բարեկամ ,  
Գոհ կըլլաս ,  
Կ'իմանա՞ս :

---

Կարիճն ու Գորտ  
Խրաւ խելօք  
Բաւական  
Ապրեցան :

Սակայն Կարիճն այսպէս .  
Օր մը դորտին ձայնեց .  
« Գորտ աղբար ,  
Լաւ չըլլա՞ր ,

Որ մի անգամ լըճէս անդին  
Երթանք դիտել ի միասին .  
Թէեւ ես սէ , ինչպէս դիտես  
Լողալ չդիտեմ , որ դամ հետ քեզ »

— « Հողդ հատեր է ,  
Այդ ալ բա՞ն է :  
Երբ շալկել գրե՞ղ  
Կարող եմ ես » :

Վերջապէս ի գործ դրին ,  
Իրարու ինչ որ ըսին :  
Բայց հազիւ մէկ քիչ ատեն  
Անցած էր , կարիճն անդէն

Գորտին խայթեց ,  
Կրկին խայթեց :

Գորտն անդէն «-ճ «-ճ պռուպ .  
Եւ ըսաւ ձայնիւ մարած .

« Կարիճ աղբար ,  
Ինչո՞ւ համար

Դու չարաչար դիս կը խայթե՞ս ,  
Գոնէ պատճառն ի՞նչ է , չըսե՞ս » :

— « Ո՛վ Գորտ ընկեր ,  
Զը գիտե՞ս դեռ ,

Որ կարիճք սովոր են ,  
Երբ մարմին թէ գլտնեն ,  
Անպատճառ կը խայթեն .  
Բնական է , ի՞նչ ընեն » :

— « Նա՛ , բայց կարիճ ,  
Գիտցիր հիմիկ ,

Որ գորտերն ալ ջուրց խորունկէն  
Լողալ կուզեն . էհ , ի՞նչ ընեն ,  
Այս ալ բնական  
Մեզ է միայն :

Ուստի ըսէ ,

Ինձ ի՞նչ հարկ է ,

Ջրին երեսէն տանիլ ըզքեղ ,  
Քանի դու չար կենդանի ես » :

Ըսաւ չրաւ

Գորտ սուզեցաւ ,

կարիճն ըսեա

Ջրին երես

Մընաց ու տկուեցաւ .

Խղդեցաւ սասկեցաւ :

Այնպիսիներէ՛ որոց խայթել  
Միշտ բնական է, հեռու փախչել

Պարտաւոր են

Մարդիկ ամէն :

Երբ չար մարդուն

Թէ ըլլաս դուն

Բարեկամ ու աղբարուկ ,

Ո՛րչափ ձիւն փորձանք դժտուղ

Իրարու վրայ

Նայէ կուգայ :



Ե .

Ճանճ

Փչեց քամին

Հիւսիւսային .

Անձրև կուգար ,

Ու ձիւն կուգար :

Ճանճ կը մըսէր ,

Քանդի ցուրտ էր :

« Ոհ, ո՞ւր գրտնեմ տեղ մը տաքուկ,  
Ուր տեղ երթամ ես հիմակուկ » :

Կ'ըսէր կ'ըսէր,

Կը թուչրտէր :

Յետոյ պատին վերայ կեցաւ,

Շունչ մը առաւ ու զայս ըսաւ .

« Աստուած, այսպէս որմքած սրբլած

Չը կաս-կապոյտ ցրտէն եղած

Մըսիմ .

Սատկի՛մ . . . :

Ըսաւ ,

Լացաւ :

« Միտքս ընկաւ հա ,

Ի՞նչ լաւ կըլլայ .

Մամուկն ահա տես պառկած կայ ,

Անուշ անուշ կը քընանայ .

Անշուշտ եթէ երթամ հիմա ,

Նա կողորմի խեղճիս վերայ :

Երթամ ,

Չայն տամ » :

Կարող չէ, սակայն ո՞ր էր,  
Քրեայի պէս սրտիկի վնէր •  
Ըսել կ'ուզեմ սրտիկի ըստ  
Ասու գթոտ ու բարերար» •

Կիսն ըսես

Պատասխանեց :

«Այնչա մը ունիս, Աղուէս աղբար,  
Ըսէ նայիմ, գիտե՞մ մէկ ճար» •

— «Արտորդ ներէ հազիւ փախաց,  
Բայց վերաւոր արիւնջը այ •

Ո՛հ, հիմակուկ,

Բարի՛ Արիուկ,

Մինչ ծարուէս

Կը մարիմ ես,

Մէկը չը կայ որ մէկ պրտիկ  
Տայ ինձ գոնէ պազուկ ջըրիկ •

Ո՞ր էր որ դու քո կտուցով  
Զորէս ջուր մը տայիր շուտով

Գէթ յունուն

Մօրդ արեւուն » •

Անխելք Արկուն

Այս սողութաւն

Հաւատաց

Ու գլխաց :

Բայց երբ դարձաւ, և իր կրտսե,  
Նորա բերնի մէջ երկնացոց,  
Նա իսկոյն սխմեց խողեց,  
Եւ անյագ կերաւ լափեց :

Երբ բարի ընել ուզես,  
Զայս առած յիշել պէտք ես,  
Թէ « զօճ գրկես,  
Խայթէ ըղբն զ » :

Քանզի շար մարդուն  
Երբ բարի ընես դուն,  
Փոխարէն  
Այն մարդէն  
Դուն բարի մի յուսար,  
Բարեկամս, իմացա՞ր :

Բայց թէ ըսես ,

Ո՛չ այդպէս .

Ես յայնժամ ,

Բարեկամ ,

« Արիւնքո իքո դըլուխ » .

Քեզ կ'ըսեմ , կը մեկնեիմ շուտ :



Է .

Օձ , Գորտ , Կրիա

Օձն ու Գորտ ու Կրիան

Սէր կապեցին մտերմական :

Բայց Օձուն չարակամ

Ով ըլլայ բարեկամ

Նա անկասկած

Խենդ է ցնդած :

Օր շատ շանցաւ : Երբ չար Օձը

Խղդեց կերաւ տըկար Գորտը :

Բայց Կրիան

Աս ժամայն

Բարկացաւ ,

Դատ բացաւ :

« Այս ի՞նչ է, կ'ըսէր , Օձ չար ,

Ապրիլ հետ մեզ դուն խոտացար

Ձերդ ընկեր

Բարեսէր » :

— « Սատակեցի, ի՛նչ հարկ կայ քեզ ,

Ո՛վ դատաւոր դրաւ ըզքեզ » :

— « Բայց դաշնըդ գէթ ո՞չ յիշես » :

— « Դաշն ի՞նչ է , դուն կը յիշե՞ս ,

Ար մէկ աղուէս քարոզ կարողաց

Թէ « իրաւունքն է հզօրաց » :

Արիան լրուեց ,

Բայց քէն պահեց ,

Ուստի օր մը երբ այն չար Օձ

Պըտոյտ կ'անէր ի մէջ խոտոց ,

Արիան դընաց

Կամաց կամաց

Խածաւ անդէն

Նորա պոչէն :

Օձ սարսափած կըսէր այսպէս •

Թէ «ինչո՞ւ դիս կը շարչըրկես •

Մեր դաշնը դէ՞թ յիշէ՛ ,

Եւ ազատ դիս ձրգէ » •

— « Իսկ կ'ըսէիր դաշնն չը կայ

Ամենեին երկրիս վերայ •

Իսկ իրաւունքն է հրդորաց ,

Ո՞չ ապաքէն աղուէսն ասաց •

Ուստի , չա՛ր ,

Պատիժդ առ » •

Օձն օրն ի բուն շարչըրկեցաւ ,

Քարէ ի քար իւր գլուխ զարկաւ •

Ճգմեցաւ

Սատկեցաւ •

—

Այս առակ

Շարունակ

Երբ դուք լըսէք ,

Բայս յիշեցէք •

« Զոր քարոզես

Ըզնայն լըսես » •

Ը.

Շուն

« Բարկութենէս  
Ահա կարծես  
Ես կը ճաթիս ,  
Հուր կը կարիս .  
Ծօ , սա նայէ ,  
Ինչ լսել է ,

Որ ապուշ ոչխարաց

Սա խեղճուկ կենդանեաց

Ըլլամ միշտ ես

Ծառայ այսպէս :

Գիշեր ցերեկ անքուն հսկեմ ,

Միշտ հոն ու հաս ես պահպանեմ .

Մէկ մ'ալ տեսնես ,

Ի՞նչ կը լրտես .

«Շըներ , ո՞ւր էք ,

Հասէք , հասէք » :

— « Ի՞նչ կայ » :

— « Գայլ եկած է , վաղեցէք հա •

Գող եկած է , բռնեցէք հա » :

Շնչասպառ կը վազվառենք ,

Ար փախցընենք կամ կը բռնենք •

Բայց մեր բազդէն յանկարծակի

Գող դայ կամ գայլ , առնաւ տանի

Մենէ գաղտուկ

Մէկ ոչխարուկ ,

Յղճուկ մեզ , հովիւք ամեն

Ինչեր մեզ կը հասցընեն •

« Գուք ծոյլ էք ,

Սանկ նանկ էք » •

Ա՛րսեն կ'ըսեն

Ու կը տըփեն :

Ով Տէր Աստուած ,

Այս ի՛նչ չարքաշ

Կենաց ըզմեզ .

Վիճակեր ես :

Իսկ մերին վարձք , ով տէր , ի՞նչ է •

Կամ մէկ քանի չոր ոսկոր է ,

Կամ մէկ քանի հացի կըտոր ,  
Ամէնն ամէն այս են բոլոր :  
Գիշեր ցերեկ մենք կը տատինք ,  
Բայց ոչխարի չափ յարգ չունինք :  
Է՛հ , ի՞նչ հարկ կայ  
Ըլլալ ծառայ :  
Երթա՛մ լեռներ , ձորեր շրջել  
Գաշտեր չափել , աղատ ապրել » :  
Երկար բարակ Շուն խօսեցաւ ,  
Հուսկ դըւխն առաւ ու մեկնեցաւ :  
Բայց Գայլուն մէկ հանդիպեցաւ  
Երբ այս Շանը , նախ դարձացաւ ,  
Ապա ռանայ , « ա՛ Շուն աղբար ,  
Տրտում ախար ինչո՞ւ համար  
Կը թախտա իս  
Անդ ին ապր իս :

— « Զգուեցայ ,  
Զանձրացայ  
Ոչխարներէն ,  
Հովիւներէն » :

— « Բարի եկար ,  
Շնիկ աղբար ,

Նկուր ուխտենք եղբայր լինել ,  
Ի միասին սիրով ապրել .

Բայց հիմա թէ անօթի ես

Նկուր յորջրս , հօն ես տամ քեզ

Խիտ կակուղիկ

Համով մշաիկ » :

Երկար ջրնեմ ի միասին

Խօսակցելով ելան գային :

Ուր մեր Շնիկ լաւ կըշտացաւ ,

Խորունկ խորունկ հօն քնացաւ .

Բայց արթընցա՞ւ այն խոր քունէն ,

Ի՞նչ շարթընցաւ , շեղաւ կ'ըսեն :

Պատճա՞ռ .

— Եղբայր ,

Վասն զի գայլուն կամք

Զայն խղղեւ էր ուզած :

—

Հազար անգամ կարծեմ ըսուած

Միշտ անդ աղար է քարոզուած ,

« Ով որ դռն է ,

Երջանիկ է » :

Յիշեցէք միշտ և այն առած  
Որ Խիկարէն է հոչակուած .  
« Սնձրեւէն երբ կը փախչիս ,  
Կարկուտի կը հանդիպիս ,  
Եթէ խելքդ առաջնորդ քեզ  
Գու ընել անկարող ես » :



Թ .

Ազան Ազնի

Ելաւ գընաց Ազնին օր մը  
Խաղող գողնալ այդ ինչ մը :

Բայց ի՞նչ կըսես , երբ հոն հասաւ ,  
Մէկ կըրիայ յանկարծ տեսաւ ,  
Որ իր հաստ վիզ երկարցուցած  
Կարմրուկ կուզերն խիտ հասուեցած

Կուշտուկու

Յորկոր իւր

Կը հռէր ,

Արթիւնք :

Նախանձեցաւ ,

Ատաղեցաւ :

Ուստի անդէն փշեր տնկեց ,

Դէպ ի Արիան շուտով վաղեց :

« Ո՞վ կըլլաս դուն , աւազակդ ո՞ղ :

Որ հոս եկեր կ'ուտես խաղող .

Ըսէ՛ , ըղբեղ

Հոս ո՞վ խրկեց :

Խաւ կ'ըսեմ , հաւատա դո՛ւ ,

Որ փշերովս աչերդ երկու

Այլ փորեմ ,

Այլ հանեմ :

— « Ասուոյ , եղբայր , ի՞նչ հարկ կայ .

Այգիս մէջ քանի որ կայ

Խաղող շատկեկ ,

Բաւ ինձ ու քեզ :

Այգետէրն երբ դուն չես ,

Քեզ ի՞նչ փոշի՛ , թէ՛ թխեմ ես

Այգւոյս

Ողկոյց » :

« Ի՛նչ , աւազակ , ո՞վ ըսաւ քեզ  
Քարոզ կարդալ ինձի աշխատ .  
Այգեաւեր ըսամ չըսամ ,  
Երբէք թող պիտի չըսամ

Որ ուսես դուն

Խաղողս հասուն » :

Ըսաւ . վազեց Արիային քով ,  
Հարքեց կուզերն իւր վշերով .

Ձը թողուց

Որ մէկ կուզ

Նա ուտէր

Ու մեկնէր :

Ագահ մարդիկ ու նախանձատ  
Ո՞վ կը հաւտայ , թէ սիրտ դժոտ  
Ունին ,  
— Չունին :

Թէ գործ չունիս ծակաչք մարդուն

Միշտ քարոզէ արդարութիւն ,

Թէ բան չունիս նրմա ըսէ .

«Բարիք բնութեան , եղբայր , բաւ է

Թէ քեզ թէ ինձ , արդ՝ ի՞նչ հարկ կայ

Անկուշտ աչօք եղբօրդ վերայ

Նայիլ նայիլ

Ու նախանձիլ ։

Դուն կը յուսաս

Որ քո սասած

Նա լրսէ ,

Քեզ մըսէ ,

Մի յուսայր ,

Ո՛վ եղբայր ։



Ժ .

Հպիտ եւ Ծպիտ

Տօն օր մի

Դէմ դէմի

Հպիտն ու Ծպիտ

Ի դէմս ժպիտ

Իրարու պատահեցան ,  
Շատ երկար խօսակցեցան ,  
Նախ Հպիտ  
Առ Օգիտ ,

Շորորալով ու նապելով  
Հապարումէկ իւր ձեւերով՝

« Աղջոյն , դռչեց .

Տէր , դուն ո՞վ ես » :

— « Ես ծպտելովս պաշտօն ունիմ  
Գրաւել յիս Աէր մտերիմ .

Անկեղծութիւնն ի ներքուստ ես

Միշտ կը պահեմ սրտիկիս մէջ .

Քայց չա՛ր

Աշխարհ ,

Ուր տակն բան եթէ յայտնի

Խօսուի դործուի , կամ ցոյց տրուի

Ոչ կոկիկ ձեով

Սուտ ու կեղծ տեսքով ,

Պարզուկ մարդն միշտ անպատճառ

Միթէ ջը՛ւար խաղք չարաչար :

Բայց դուն ո՞վ ես , ով բարեկամ ,  
Ըսէ նայիմ ես խմանամ » :

— « Մարի՛ , միևնոյն  
Ունիմք պաշտօն :

Ես ալ հպտելովս , տէր ,  
Կը ջանամ գրաւել ըզՍէր :

Ո՛հ , չա՛ր  
Սշխարհ ,

Ուր Սիրոյ աչք միշտ անդադար  
Էսկ արտաքին խենդ ու խելատ

Չուարժ խօսքի ,  
Պերճ նազանքի  
Կուշտ կը նայի  
Կը կարմըրի՛ . . .

Իսկ պարզ մարդուն ո՞վ կը նայի :

Ո՛հ , Սիրոյ մէջ ճիշդ յաջողութիւ  
Կարելի է , եթէ հպտիլ  
Ունիս .

— Չունի՞ս ,

Հաւատա՛ որ կը լինիս  
Միշտ անյաջող . ո՛վ Յպիտ » ։  
— « Աչ թէ դու ո՛չ , ընդհակառակ  
Ես կը տանիմ միշտ յողթանակ » ։

Այսպէս երկօրեան

Երկար վիճեցան

Թէ ո՞վ սիրոյ

է ճիշդ հաճոյ ։

Բայց վերջապէս հարկ դատեցին  
Իրենց պաշտած առարկային

Գիմել

Ըսել .

« Քեզ սիրական , Տըրիփ , ըսէ՛ ,

Մենէ ո՞րն է , ճշդիւ ընտրէ՛ » ։

— « Գացէք , հարցէք առ ճշմարիտ ,

Ես կ'ընդունիմ նորա վճիռ » ։

Բայց երբ գնացին , այս կարճ առին

Կա՛րճ պատասխան « ձենէ ո՛չ մին » ։

Արք խաբեսխուրես

Վարք բարք ունին դէշ ,

Այնպիսիներ ճշմարտութեան

Անջե միշտ խաղք պիտի ըլլան ։



Բ • ՏԱՍՆԵԱԿ

Ա.

Աղոռես է՛ն Օձ

Աղուէսն ու Օձ իրար գրտան ,  
Մտերմարար խօսակցեցան .

Խորհուրդ ըրին ,

Սէր կապեցին ,

Ար իրարմէ ամենն ին

Ինչ որ ըլլայ՝ չը բաժնուին :

Այն օր Աղուէս լեզու թափեց ,

« Օձուկ աղբար , դուն սողնոց մէջ ,

Իսկ ես ըսես անասնոց մէջ

Միթէ չե՞մք մեր յոյժ խորագէտ :

Ընկերութեամբ երբ ապրինք մենք ,

Գո՛գ կենդանեաց պիտի տիրենք .

Կենդանի մ'ալ չ'ըլլայ պիտի ,

Ար մեր գլխի մտղին դռաքի » :

Երկար ջընեմ , դոր խորհեցան՝  
Ի դործ դընել դաշնակցեցան ։  
Բայց ո՞վ չգիտէ ,  
Խիկար կ'ըսէ •

Թէ չարերուն ընկերութիւն  
Կարելի չէ վնել տեւուն ։

Արդարեւ շատ օր չէր անցած ,  
Երբ երկոքին հասան յանկարծ  
Առուի մը քով •

Աւր թձ լալով

Ըսաւ • « Աղուէս ,

Իսկ լաւ գիտես ,

Ար երբ լողալ չը գիտեմ ես ,

Ջրէս անդին անցնիմ ի՞նչպէս ։

Աղուէս աղբար ,

Միթէ չ'ըլար ,

Ար ես վըզիդ պինդ փաթթըլիմ ,

Աւ այս կերպով ջրէս անցնիմ » ։

— « Ինչո՞ւ չ'ըլար ,

Սձուկ աղբար » ։

Ըսաւ Աղուէս , ու թող տուաւ •  
Յձուկ վըզին պըլուեցաւ :

Բայց լսեցէք ,

Ու զարմացէք •

Թէ այն Յձ ի՞նչ կը խորհէր

Նայն պահուն , և ի՞նչ կ'ընէր :

« Վիզը սըխմեմ ու սատակեմ ,

Յետոյ դըլխին ծուծը ուտեմ » :

Ըսաւ •

Ըրաւ :

Քիչ մնաց որ զԱղուէս խղղէր ,

Թէ նա ճարպիկ չը գտնուեր ,

Չ'անապարեր ,

Իրեն չ'ըսեր •

« Յձուկ աղբար , մընաս բարեաւ ,

Այժմ ա՛հ , մահու կ'զգամ մէկ ցաւ •

Միակ խնդիր քենէ ունիմ ,

Վերջին անգամ կը պաղատիմ ,

Որ կատարել գոնէ հաճիս •

Ըսե՞մ , եղբայր , լրտել կամի՞ս » :

— « Ըսէ •

Ի՞նչ է » :

— « Ա՛յո , միանդ ամ երկարէիր  
Քուկին գըլխիկ , ճակատէդ տայիր ,  
Ինձ մէկ պաշիկ ,  
Ի՛մ լնկերիկ » :

Գէթ աչքըս բաց չը վեռնէի ,  
Սրբդ ինձ հետ ես տանէի » :

Խորամանկին այս խօսքերէն  
Համոզուեցաւ Օձն անօրէն •

Աստի դըլխիկն երբ երկարեց ,  
Իոչոր ուժ ո՞վն յանկարծ Ազուէս  
Թաթւրուեցաւ •

Յաջողեցաւ ,

Օձին դըլխիկը ակռաներին

Տակը առնուլ , ճգմէլ ուժգին » :

Օձ տըքաց ,

Հեկեկաց ,

Աամաց կամաց թուլնալ սկըտաւ •

Իսկ երբ Ազուէս ջըրէն ելաւ ,

Վրբան թոթուեց ,

ԶՅձ վար ձրգեց :

Յայտ է թէ երբ օձեր բոլոր

Վերջին փչեն շունչ ողևոր ,

Կը շտկըին բոլորովին ,

Երկար բարակ կը մտուին :

Սոյն օրինակ հողևարին

Զայս ակամօքն Աղուէսն ինքնին

Կը մրմուար .

« Օձուկ աղբար ,

Աշխարհիս մէջ ընկերաբար

Երկար ասրիլ մնալու համար ,

Ճիշդ և այդպէս սրտով ուղիղ

Ոչ թէ բռնաւ ծուռիկ մուռիկ

Ըլլալու է , իմացա՞ր ,

Օձ հար » :

— —

Ընարեցէք ձեզ ընկեր

Ըզնա լոկ , ո՞վ մարդէր :

Որ սիրտ ուղիղ  
Ոչ թէ ծուռիկ  
Ունի ձեզ հետ  
Միշտ և յաւետ ։



Բ.

### Կապիկ ճգնաւոր

Օր ճշ Աղուէսն ու խաժ Կապիկ  
Խորին խորհուրդ նաաան մէնիկ ,  
Թէ ի՞նչպէս ճարեն դիւրին  
Գիրուկ որսեր իրենց փարին ։

Կապիկն այսպէս  
Աղուէս գրուցեց .

« Միակ ճարն ու հընար  
Գիտե՞ս , ի՞նչ է , աղբար ,  
Աշխարհիս մէջ կարծեմ դ խտե՞ս ,  
Ճգնաւորին պատիւ պէսպէս

Կայ .

Իսկ ու ընդին երբէք չը կայ :  
Երբ այսպէս է , միթէ յիշե՞ս  
Քէ ի՞նչ ընել կը մընաց մեզ .

— Այնել ճգնաւոր  
Փառաւոր :

Գողութեան մէջ դուն մէկ հասիկ  
Յաջողակն ես , ու շա՛տ ճարպիկ .  
Ուստի հիմա կ'ելնես կ'երթաս ,  
Վարպետօրէն կը գողանաս  
Սա մեր վանքին  
Ճգնաւորին  
Կասյան ու վեղար .  
Չըսե՞ս , լաւ չ'ըլլար » :

Կասիկ չէ ջրաւ ,  
Յոյժ հաւանեցաւ :

Յանկարծ լեռ ձոր մեծ համբաւ  
Օր մը սփռիլ ըսկրսաւ .  
Քէ հրաշագործ մէկ ճգնաւոր  
Բժիշկ ցաւոց է բիւրաւոր :

Աղուէան ըսես երդում կ'ընէր •  
Ասդին անդին կը քարոզէր ,  
Թէ երբ նա իր աջ դընէ  
Ոյր վերայ , կը բժշկէ :  
Կենդանիներ առ հասարակ  
Հոն կ'երթային արագ արագ •  
Կապկին խցիկ կը մտնէին ,  
Սակայն անտի ո՞վ դուրս կ'ելնէր •  
— Միայն զօրեղը •  
Հասցա տըկա՞րը •

— Համեղ խորտիկ իսկոյն կ'ըլլար  
Ով որ Կապկէն էր քիչ տըկար :  
Անցան օրեր , այս մեծ համբաւ  
Քաջ Ասիւծուն ականջն հասաւ •  
Կաահեց իսկոյն թէ հոն խարդախ  
Կապիկն՝ Աղուէօ կը խաղան խաղ •  
Ռեստի հիւանդ սա ձեացաւ ,  
Մարբն ու վիայն տեսնել եկաւ :  
Բայց երբ Կապիկն դըրաւ իր աջ ,  
Ցատկեց իսկոյն Ասիւծըն քաջ •

Ար պատուտէր

Ու զայս կ'ըսէր .


« Դուն ի՞նչ սուրբ ճգնաւորիկ  
Ե/ր , Կապիկ ո՞ր խմ կեղծիք  
Եւ թէ իսկ սոյն հետեւտնք չար  
Քէթ խմանալ կարող չեղար » :

Իսկ Աղուէս երբ զայս տեսաւ ,  
Լեղատապառա ձրդ եց փոխաւ ,

Ար վաղէր

Ու կ'ըսէր .

« Լաւ որ եղեր եմ փոքրաւոր ,  
Ոչ թէ սէրտէր ու մեծաւոր » :



Գիտեմ մարդիկ այսպէս քանի ,  
Որք վերարկու հազամ սուրբի՝

Ինչե՛ր կ'ընեն

Մարդկան ամէն .

Թէ և աշխարհ գիտէ յայտնի ,


Թէ չար մարդը երբ ալ լինի ,

Անպատճառ

Զարուհար

Պատի ըլլայ խայտառակ

Քանի սուտ չէ այս առակ :



Պ.

Անծեղ

Զ մեռն եկաւ .

Անծեղն ըսաւ .

« Ճնճուղներ ,

Զիս ձեզ ընկեր

Ընդ ուն եցէք ,

Եղբայր ըրէք :

Զեզ հետ մէկտեղ կը միանամ ,

Ամէն առտու կը ճրճրճամ » :

Ճնճուղեր Անծեղին

Պատասխանեցին :

« Շատ աղէկ , մեզ հետ ասորի .

ճրճրճա , տաղեր երգէ :

Բայց նայի, որ մեր խրմբին  
Պլնաս չը տաս ամենեին » :

Անձեզ գոհ եղաւ ,

Երդմամբ խոստացաւ :

Բայց երդումն ի՞նչ

Չարին անխիղճ .

Քանդի իրաւ Անձեղիկ

Օր մը խղղեց մէկ ճընձղիկ .

Խսկոյն ծնձուղբ խմբովին՝

« Ինչո՞ւ ըրիր » : հարցուցին :

— « Է՛հ , ի՞նչ ընէի ,

Անօթի էի » :

— « Թռչնիկ շար , դու այդպէ՞ս »

Քո խոստում կը պահես .


Միթէ մեզ պէս թէ ուտէիր

Ճըճի՝ որդեր , ի՞նչ կ'ըլլայիր » :

Ըօին ու վազեցին ,

Արացեցին վախտուցին :

Ընկերու թեան մէջ շար մարդիկ  
Բընաւ երբէք մի՛ ընդունիք .  
Նորա թէե երդում կ'ընեն ,  
Ստիպոյն սուս են , ձե՛զ կը խարեն :



### Գայլ եւ Ոջխարներ

« Սանահար , ո՛ր սանահար ,  
Կ'աղաչեմ քիչ մը կանկ առ .  
Քեզ ըսելիք  
Ունիմ հիմիկ .

Այս ի՞նչ վիճակ է մեր վիճակ ,  
Իրաւ կ'ըսեմ , շատ գէշ է շա՛տ :  
Կըս՛ւկ , քսէ .  
Սրկաւ օր է ,  
Անօթի եմ ,  
Ո՛հ , ի՞նչ լինեմ :  
Սանահար ,  
Ասոր ճար՛

Ի՞նչ կըսես ,

Ձը գիտե՞ս :

Գայլն Աղուխուն օր մը այսպէ՛ս  
Սարին ծայրէն խօսքեր նետեց .

— « Երտակն ըսեմ՝

Թէ և գիտեմ ,

Բայց քո վերայ

Ես չեմ վստահ ձ »

— « Վստահ չե՛ս .

Ինչո՞ւ չես » :

— « Ո՛վ Գայլուկ ,

Կուտա՞ք դուք

Խօսք ճիշդ , օր միշտ ինչ որ դանկտ

Ինձ և հաւատարմածին հանես » :

— « Այո , հապա՛ւ .

Գրիխուս վերայ » :

— « Այդ՝ հիմա

Ես ահա

Կ'երթամ ինչ կ'ընեմ կ'ընեմ ,

Աշխարհեր վը համոզեմ ,

Որ ըզքեզ կարգեն հօտին  
Պահապան հաւատարիմ » :

Նախ երկօքեան  
Գաշնակցեցան .

Ապա Աղուէս ելաւ դընաց ,

Ոչխարներուն ապէս ասաց .

« Ոչխարուկներ , ես ձեզ կ'ըսեմ ,

Ձեր լաւութեան մէկ ճար գիտեմ .

Ինչո՞ւ Գայլէն միշտ վախ քաշէք ,

Սարսափահար դուք կեանք վարէք :

Ոչխարներ , տամ մէկ խրատիկ .

Ըսէք , կ'ուզէ՞ք ընել մրտիկ » :

— « Ի՞նչ է .

Ըսէ՛ » :

— « Ձեզ պահապան երբ Գայլն ընտրէք ,

Ոչխարուկներ , ի՞նչ կը կարծէք .

Միթէ վընաս ձեզ արդարեւ

Ար պատահի՞ այնուհետեւ .

Ես երաշխաւոր

Ար լինիմ անոր » :

Աղուէսն այսպէս

Հոն քարոզեց .

Ճառեր կարդաց ,

Խօսքեր ասաց .

Ար սասանան եթէ լլսէր ,

Ձը զարմանալ կարելի՞ էր .

Հօտ ապուշ ,

Ինչպէս շուտ

Խարերային համոզուեցաւ ,

Արով Գայլուկ պահնորդ եղաւ .

Իսկ և Աղուէս

Իրեն ընկեր :

Իայց օր չանցաւ , երբ Գայլն ըսեա

Նոր այսպիսի հրաման հանեց .

« Անօթի եմ ,

Միս կ'ուզեմ .

Ար մըսիմ , սամոյր կուզեմ .

Ար կատղիմ . օ՛ ձեզ կ'ըսեմ ,

Խո՛ւլ էք .

Ինչ էք :

Անխեղք Աշխարք երբ լըսեցին ,  
Անի ի բերան եղան մնացին :  
Հասկացան թէ խորուած են  
Խորամանկ Աղուխուկէն :

Սրդեօք դուք այս առակ՝  
Ո՛վ մարդիկ , կ'իմանա՞ք •  
Աղուխանըման  
Երբ դուք մարդկան  
Ականջ դընէք ,  
Արդեօք գիտէ՞ք ,  
Թէ լա՞ւ վիճակ  
Գուք կ'ունենար :



Յ .

Գորտ եւ Խեցեփար

Խեցեփարն օր մը վազեց ,  
Գորտին վրէժն հարաւ բունեց .

Եւ ասաց

Բարկացած .

« Ըսէ . ի՞նչ կայ , որ օրն ի բուն  
Էրճէս կ'ելնես , կըրկրասս դուն »

Մինչև ե՞րբ

Լսեմք մեք

Քո աղաղակ ,

Շե՛ր շողակրատ :

Այսօր ահա վերջ պիտի տամ  
Քո անախորժ ձայնիդ անհամ » :

— « Հաւատա՛ , ով իմ եղբայր ,

Կ'աղօթեմ ես անդադար ,

Որ ձորիս ջուր ընէ Բստուած

Միշտ անըստառ ու անպակաս .

Որպէս զի դուք հետ մեզ Գորաց

Հանդիսս ապրիք ի մէջ ջրոց » :

— « Քո այդ աղօթք ինձ ի՞նչ մտցի՛ ,

Քանի որ ինձ կուտայ ձանձրոյթ .

Միթէ աղօթք ընես մտօք ,

Տէր ջըլաե՞ր կարծես արդեօք » :

Ըսաւ և իր մկրտաւ բացեց ,  
Խեղճ Գորտուկին սրուկը սխմեց .  
Պատի հանէր նորա ողին ,  
Նթէ կրիան հոն նոյն կէտին

Ձը հանդիպեր

Ու չ'արգիլեր :

« Թո՛ղ դիս , պուսաց թեչեփար .  
Որ սատակեմ շարաշար ,  
Չանճրացած եմ ձայնէն անհամ » :  
— « Ես ալ նոյնպէս , բայց այս անգամ  
Ներեմք , առնլով երդում իրմէ ,  
Որ այլ ևս միշտ ձայնը կտրէ .  
Գորտ , ի՞նչ կ'ըսես .  
Դեռ կը լրուե՞ս » :

Ճարահատած Գորտ խոստացաւ ,  
Նղո՛ւկ գըլխիս , նոյն իսկ երդումա՛ւ :  
Բայց յաջորդ օր՝ եկուք տես ,  
Լրուեթե՞նէն Գորտ կարծես .

Կը ճաթէր ,

Կը տկուէր :

Քանզի ունէր բընոյթ սովոր ,  
Արևալ ի ձայն գիշեր և օր .  
Ճարը հասած՝ ալ ի՞նչ ընէ ,  
Արկըռ մը է , որ կը ձգէ :  
Իսկ Խեչափար կըրակ կըտրած՝  
Չորին մէջէն վապեց արագ ,  
Գորտին պըկէն  
Բռնեց անդէն .  
« Ա՛յ դեղնած ծեր , շողակրատ չա՛ր ,  
Ո՛չ ապաքէն դուն խոստացար  
Չարձակել ճիկ ու ձայն .  
Իսկ այս ի՞նչ , անպիտան »  
Մեռիր մեռիր , դրուժան վատ ,  
Սատկէ այսօր , ծեր շողակրատ » :  
Հաւա շրաւ մկրատ սխմեց  
Ու սատակը գետին ձըգեց :  
Բայց իր վերջն ի՞նչ եղաւ ,  
Ծաղրելի յոյժ եղաւ :  
Ձի երբ վերայ այս յաղթ ութեան  
Էր շրփացած Խեչեփարն այն ,

Ի՞նչ լըսէ . — Աշուն գրգուռց .

Կը կտրի կրակ ու բոց .

Նւ կ'ըսէ . « օ՛ն , երթում ,

Սըտը ալ հախէն դամ » :

Կը ցատկէ ու կը խածնէ

Իշուն՝ սաք , բայց անկէ

Մէկ կից կուտէ

Շունչ կը փչէ :

— —

Բայց յանցանքը ոչ այնչափ

Խեղեփարին , այլ որչափ

Կրկային էր , որ անունակուն

Պայման դնելով՝ գործ դիմաթեան

Ընել կարծեց : Աստուած փրկէ

Մեզ այս կերպով դիմացողներէ :



Ձ .

Կապիկ գինով

Քանիմք եղեր մէկ Կապիկ ,  
Ինձ կը պատմէր իմ մամիկ .  
Անչափ ժիր , անչափ արթուն ,  
Որ բոլոր տնեցիներուն  
Շատ սիրելի է եղեր .  
Բայց մամէս շատ չէ սիրուեր :  
Պատճառ .

— Եղբայր ,

Մամիկս կ'ըսէր , երդում կ'ընէր ,  
Թէ բաւական ճարպիկ գող էր :

Սակայն օր մը

Մեծ փորձանք մը

Երբ մեզ կը բերէ ,

Հայրս զինք կը ծախէ :

Գինիով լեւի-լեցունկեկ

Բակին մէջ տուճիկ կար մէկ :

Հայրս օր մը տուճկին փողոսկ

Կը հանէ • քիչ ժամանակ  
Գինին ճրճա կը վազվըզէ •  
Հայրս կուռիկով կուշտ կը խմէ •  
Կապիկն ըսես գաղտ կը դիտէ •  
Հոտ առնըլով՝ ախ կը քաշէ •

Երբ հուսկ ուրեմն հայրըս կ'երթայ •  
Կապիկ տուճկին կը մօտենայ •  
Կուռիկ կ'առնէ • խից կը հանէ •  
Ղեցուն կուռիկ մէկ կը պարսպէ •

Կրկին կը կըլլէ •

Անուշ #ե յՖ կ'անէ •

Բայց վերջն ի՞նչ ընէ •

Խըմելն իբր թէ քիչ էր •

Խելք չ'ընէր •

( Խելք ունէ՞ր • )

Փողրակիկը տեղը խոթել

Եւ գինիին վազն արդիւել

Գինին մինչ կը ճրճաայ •

Ինք մէկ կողմ էան կուգայ •

Գինւոյն ճրճութի

Ա՛րնէ մըտի :

Քրթին տակով կը ծիծաղի :

Աարծես թէ կը մարմըրի :

Մտնա յանկարծ վար կ'իջնէ ,

Սակայն ի՞նչ կը տեսնէ .

Բակն է ծով դարձած ,

Գինին է թափուած :

Ար դարմանայ ,

Ա՛տալի կը մնայ :

Մէկ մ'ալ ի՞նչ տեսնէ ,

Ատալի գինով է .

Փռուեր պառկեր է ,

Ճիւեր սնկեր է .

Իսկոյն կը կռահէ ,

Աապուլ կը քաշէ ,

Ար տըփէ ,

Ա՛սնիծ է :


Վերջ հայրս տուն կուգայ ,

Երբ գայս կ'իմանայ ,

Ի՞նչ ընէ •

— Տէ՛ֆ կ'ընէ •

Երբ չէ ծառայ. հաւատարիմ,  
Վսի՛յ է եկեր տանդ. ու. գըլխիդ •  
Այսչափ կ'ըսեմ  
Ու կը լրուեմ :



Է •

Արարեալ

Արարեալ երկու  
Հեռ իրարու  
Կատաղազին  
Կը կուռէին :

Պատճառն ի՞նչ էր •

— Ըսեմ, այս էր :

Պատուհանէն իմ ծերուկ մամ  
Երբ խեղճին դար, շատ անգամ

Հատիկներ կը նետուի ,

Որ ստեն իւր հաւեր :

Բայց ինչպէս աշխարհ ամէն

Գիտէ , թէ բընակեամբ են

Ա. քլորներ

Կառուակի :

Ուստի մեր պատառիկ

Մէկ քանի ևս կը ատիկ

Օր մը դատ կը նետուի

Ձե աշխարհ կը ժողէ •

՝ Ա. քլորներ հոն հիմակ կ'երթան ,

Իրարու դէմ ծեծ կը բանան •

Իսկ աստի ևս կը դիտեմ ,

Խնդումով նոցա կ'ըսեմ •

« Օ՛րս ըլլայ , անառակներ ,

Խեղճ հաւերս միշտ կոցողներ ,

Հիմակ իրար կոցեցէք

Եւ իրարու միս կերէք » :

Ըսաւ •

Ըսաւ :

Ա. քլորք ըսես  
Կայծակի պէս

Թրուան ,

Հասան :

Բայց և կոխ

Բրդաւ սաստիկ •

Նախ իրարու խօս նայեցան ,  
Ապա իրար կըտցել սկըսան •

Ար միմեային ,

Ար պնդէին

Թէ « իմս է , քուկըդ չէ » •

— « Ո՛վ ըսաւ • ոչ , ի՛մս է » :

Մինչև իրկուն ծեծկըւեցան ,  
Արիւն քրտինք իսպառ մշտան •

Եւ շարունակ դես իրար

Աս կտցէին շարաշար ,

Յանկարծ մէկ կուց հեռէն տեսան •

Նրկոքին իսկ միայութեան

Չայնեցին • « Ա՛սկ աղբարկ ,

Կ'աղաչեմք , կայ մէկ քրչիկ •

Խըղճիդ համեմատ

Կըտրէ՛ այս մեր դատ ,

Ապա

Գընա՞ :

— « Շատ աղէկ .

Բայց գիտէ՞ք ,

Աքլորներ ,

Որ կուզեր

Նուազ ինչ խուլ կ'ըլլան

Եւ այս է մեզ բնական :

Ուստի քիչ մօտ եկէք ,

Եւ այնպէս խօսեցէք » :

Աքլորներ մօտն եկան ,

Բայց ի՞նչ դատաստան

Գըտան կուզէն

Քատաւորէն :

Կուզն անդէն ելաւ ցատկեց ,

Երկուքին վըզէն բռնեց .

Ուժով խղդեց ,

Արիւն ծըծեց :

Պատու մամիկս երբ դայս տեսաւ ,  
Իբաւ թէև շատ զղջացաւ ,  
Իայց՝ ինչ օգուտ . եղածն եղաւ :

Արք դատաւոր իրենց դատին  
Ահլնեն ընարել վատ թշնամին ,  
Թող յիշեն այնպիսիք  
Այս առակ ճշմարիտ :

Ը.

Արջ , Աղուես , Խոզ  
Ընկերին  
Չար խօսքին  
Նայելու չէ ,  
Խաբուելու չէ :

Անան մը դար ու վատ  
Տեղ մը  
Օր մը

Աղուէան՝ Արջն ու խոզ

Իրար կը գտնեն •

Երդում տը կ'ընեն ,

Որ եղբայր ըլլան ,

Միշտ սիրով մնան •

Բայց քանի որ հազիւ անցաւ ,

Աղուէան յանկարծ բերան բացաւ •

« Արջուկ աղբար , ա՛րջ աղբար ,

Անօթի եմ , աճան , մէկ ճար » :

— « Համբերէ մէկ քըշիկ ես ,

Աստուած տայ որսեր թերեւ •

Ի՞նչ կը կարծես , միթէ քեզ պէս

Խիտտ անօթի չե՞մ ես , Աղուէս » :

— « Համբերու թեան ի՞նչ հարկ կայ ,

Երբ մեզ պատրաստ օւտեստ կայ •

Տես ինչպէս այս դիրուկ խոզ

Պատկած կայ հանդարտ անհոգ •

Օրն ի բուն կուտի , կը խմէ ,

Անուշիկ +եջճ կը քաշէ ,

Իսկ որ մը մեք կշտացած՝  
Հանգիստ անխռով քրնացած  
Ունի՞մք .

— Զուներք :

Այսպէս ջըլար , Արջուկ տղար ,  
Փնտուելու է մէկ դիւրին ճար ,  
Ոչ թէ քաղցէ  
Սատկելու է :

Զըլա՞ր , որ այս գէր Խողուկ  
Ուտենք այսօր , աղբարուկ » :  
— « Բայց , Աղուէս ,  
Ո՞չ յիշես ,

Որ երդուած եմք հետ իրարու  
Եղբայրաբար միշտ ապրելու .  
Հապա պատիւ մեր ո՞ւր կ'երթայ .  
Այնուհետեւ միթէ վատահ

Ո՞վ կըլլայ

Մեր վերայ » :

— « Ամենեին այդ մի մտածեր ,  
Ճար մը գիտեմ գուն անհող լեր .

Մինչ գի երբ դայն դընենք ի դործ ,

Ոչ ըզմեզ ոչ մեղադրէ ոք :

Լըսէ .

Այս է :

Պանիր կար , սուր է , կը գոչեմ ես ,

Գուռն աղ ես ի՞նչ գիտնամ , կ'ըսես .

Վէճ կը հանեմ և կը պնդեմք ,

Որ բերաննիս քննելու եմք :

Մեք իրարու համար կ'ըսենք ,

Երդ մամք այսպէս կը վկայենք .

Խաչ վըկայ ,

Բան չը կայ :

Սակայն երբ գայ կարգը Խողին ,

Կը կանչուըռտենք ի միասին .

Բերնիդ մէջ , Խող , ահա

Տէր վըկայ , կըսոր կայ :

Գուռ ես կերեր ,

Գող ես , ընկեր :

Նոյն ժամանակ զինք կը պատուենք ,

Տարուկ տաքուկ կը լափլըփենք :

Սոյն մեր դորժ այսպէս ահա  
Քաւակիան կ'արդարանայ ։

Սակայն սորա շէին դիտեր ,  
Թէ իրենց խօսք խող կը լրակր .

Քանզի քուն չը ,

Այլ ի միտքի էր ։

Յաջորդ օր կուլ ըրդաւ ,  
Քանի գնաց սաստիկ տաքցաւ .

Հուսկ Ազուէս մէջ ընկաւ ,

Իւր խորհուրդ խօսեցաւ .

Սոյն ալ դնելով միակ պայման ,

Որ զոհ ուտողն երթայ մահուան ։

Երեքեան իսկ հաւանեցան ,

Եւ փոխն ի փոխ քննուիլ սկըսան ։

Բայց երբ կարգ խօսուն եկաւ ,

Բերանն բացաւ՝ նոցա լսաւ .

« Օն , եկէք ,

Նայեցէք » ։

Ազուէսն լսաւ . և եղբայր Արծուկ ,

Նախ՝ և առաջ նայեցէք դուք .

Յետոյ ես .

Ի՞նչ կ'ըսես Ե

Արջուկ չէ չրսաւ .  
Բայց երբ մտակցաւ ,  
Խոյլին կընճիթէն՝  
Արածայր ակրայէն  
Այնպիսի սասաիկ հարուած  
Իր ճակտին կեքաւ յանկարծ .  
Որ ըղեղ ցնդեցաւ ?  
Ու ընկաւ , սասիեցաւ ւ  
Իսկ Աղուէս կը փախչէր ,  
Այլ վաղէր ու կ'ըսէր .

« Փառք Աստուծոյ ,

Որ չեղայ դո՛ւն՝

Ընկերիս նըմանակ

Որկորի նա՛հատակ » Ե



Ք .

Յձ ԷՆ ԱՌԱՅԻՆ

ՅձՆ ԱՌԱՅԻՆԻՆ ՍՈՅՆԻՐ ԿՐԻՄԱԼ .  
ԶԱՊՈՒԿՆԵՐԸ ՈՒՍԵՂ ՍԻՐԱԼ :

Մայրը մերէն  
Ընկզի ծառէն  
Կը սրուար .

« Յձ աղբար ,

Զաղուկներս Էն .

Աճան , մեղք Էն » :

— Ե Զաթրուտիս ,

Պատրուտիս ,

Պիտի ուտեմ ,

Պիտի կըլլեմ :

Ըզքեզ իսկ թէ ձեռք ձրգէի ,  
Նայէ թէ քեզ ի՞նչ կ'ընէի » :

Ըսաւ ջրաւ

Կաներ կերաւ :

Առնէտ ձայն ալ շը հանեց ՚  
Բայց սխալ բոյնը փնտռեց ՚

Հուսի գլտաւ .  
Վրէժն առաւ ՚

Երբ ցուրտ կոխեց  
Եւ բուք փլչեց ՚

Ընթերցող, գիտես արդէն ՚  
Թէ օձեր ձրմբան առեն

Կը թըմբին շուր գարուն ՚

Յետոյ նոր կեանք կ'առնուն ՚

Ճիշդ այն առեն թճին պոչիկ

Առնէտ կըրծեց, խուսեց յուշիկ ՚

Բարեկամ, դու ըսէ ՚

Օրին մէկ թճն եթէ

Իւր թըմբիրէն կենդանանայ ՚

Ո՛րչափ պիտի շատ զարմանայ ՚

Երբ տեսնէ ՚

Թէ ինքն է

Անպոչ մնացած .

Խայտառակուած ՚

Ա՛յլ մեծ մարդիկ , խոհեմ եղիք ,  
Մի՛ տրկարին , մի՛ շատ դւարչիք .

Ապա թէ ոչ՝

Յո՛ւ մը ձեր պոչ

Տրկարէն կըրծւած

Ար տեսնէք դուք յանկարծ ,

Եւ կ'ամբշնար

Այն ժամանակ :



Ժ .

Իմ էջս

Ա՛հ , ի՞նչ ընեմ , իմ կոյր բաղդէս  
Արբ մընացի հօրէս մօրէս .

Երբ մէկ որբուկ

Չունի տիրուկ ,

Խեղճուկ կ'ըլլայ

Երկրիս վերայ :

Ճակտիս քրտառք հաց ճարեցի ,  
Քիչ շատ ուսում ալ ճարեցի .

Ազգս հայրենիքս էին թըշուառ ,  
Ինձ նման որք , անտէր՝ տըխմար :

Ուստի Իշուս վերայ նըստայ ,

Դէպ ի Ձէյթին ելայ ճամբայ :

« Իշուկ , կ'ըսէի ,

Որքանս դու յարգի

Պիտի լինիս , երբ հասնինք մեր :

Հոն շատ պիտի առնուս երեսեկ ,

Որ ինձ նըման վարպետ ընտիր

Քամակդ առած՝ սիրով տարիր :

Այո գիտեմ , դու թաշկեցար ,

Եւ թէ խիտ շատ անօթեցար .

Բայց համբերէ՛ , փութեա Ձէյթին ,

Հոն վարձ պիտի առնուս կրկին :

Բայց « Իշուն ի՛նչ յորդոր խրատ ,

Խիկար կ'ըսէ , փայտ միայն՝ փա՛յտ » :

Ճիշդ էր և դեռ կը խօսէի ,

Իշուն աչքին քիչ շատ հեռի

Ի՞նչ դըստի .

— Դէ՛ս խոտի :

Ուստի ճեպով  
Զրգրաւով

Ձիւ վրայէն նախ վար նետեց ,

Ապա դէպ ի խոտնոց վաղեց :

Ես ի՞նչ ընեմ . — ետեւէն

Շուտ քայլ առի: Հեւալէն .

Որ իշուս այս տնդամ

Ոչ թէ խրատ՝ այլ փայտ տամ:

Բայց ի՞նչ տեսնեմ , հոն Ձէրքէսնե՛ր:

Արք սնդեցին , թէ իշուս տէր

Իրենք են :

« — Բայց ինչէ՞ն .

Քէթ ձեզ կա՞յ

Մէկ վըկայ » :

— « Վկա՛յ . նոյն իսկ էջն է , որ զմեզ

Երբ տեսաւ , ճանչեց՝ վաղեց :

Ես՛ , ինչպէ՛ս ալ մեզ կը նայի ,

Սէ ի՛նչ հարկ կայ վըկայի . . . » :

Սէ ի՞նչ ես խօսէի :

Արք էջն իսկ նենդողի

Դեր կը խաղար  
Խաբար :

Մեկնեցայ , բայց կըլայի գոհ ,  
Թէ անժիտ էչն առնէին լսկ .

Ախր լիք խորճերս ալ գրաւեցին  
Եւ զիս տկլոզ արձրկեցին :

— Ի՞նչ իրաւասիր .

— Արդարութեամբ .

Քանզի էչն ինձ շատ ատեն

Ծառայելուն փոխարէն

Ար մնամ եղեր պարտական

Չէրքէս տեարցըն պատուական :

— —

Եթէ առակ լինէր այս

Ար մեկնէի , բարեկամս .

Բայց զէպք է ճիշդ ինձ պատահած ,

Դուն նայէ որ առնուս խրատ :



Դ. ՏԱՄՆԵՄԿ

—

Ա.

Կապիկ դայեակ

Մայրեր ,

Հոկ ձեր

Համար այս առակ

Գրեցի ես հիմակ .

Վարդացէք ,

Խրատ առէք :

— —

Վապիկն օր մը դողցաւ՝ կ'ըսէն ,  
Մէկ օրօրոց մէկուհի տընէն .

Եալակն առած՝ ծառին ճիւղէն

Չայն վար կախեց , ու ինք վերէն

Անցնողին ,

Դարձողին

Ար բարողէր ,

Կը պղաւէր :

« Կենդանիք ,

Թէ ունիք

Նորածին տղակ ,

Ինձ առէք բերէք •

Ես ձեր տղոց

Ունիմ օրոց :

Առտու իրկուն կը փաթաթեմ ,

Տաքուկ շորով լաւ կը պըպեմ •

Չեռներ ոտներ ես կը կապեմ ,

Անուշ անուշ կը քնացունեմ •

Օրօր կ'ըսեմ ,

Նէննի կ'ըսեմ :

« Ասօր մեր տղան քուն ունի ,

Թա՛ւա շինած օրոցք ունի •

Օրօր օրօր

Նէննիկ օրօր :

Աղա ճաշա հարիկ ունի ,

Թանա՛ւ խա՛նա՛ն մարիկ ունի •

Օրօր օրօր

Նշննիկ օրօր :

Անձոտ ճուլիկ մամիկ ունի ,  
Կոճկղլուխ պատ մը ունի .

Օրօր օրօր

Նշննիկ օրօր :

Օրօր ըսեմ ըսեմ տանի ,  
Գուռը դնեմ Օչոն տանի ,

Օրօր օրօր

Նշննիկ օրօր » :

Անխելք Սրջուն մէկ երբ լսեց ,  
Գէտ ի վեր աչքը տնկեց .

Մտիկ ըրաւ ,

Ինչ որ ըսաւ

Շատխօսիկ

Այն Կապիկ :

« Եօ Կապիկ , որջիւ մէջ կա :

Նորածին մէկ երախայ :

Ար նայի՞ս

Զաւակիս :

Թէ դուն տածես խօսածիդ պէս ,  
Ուղածիդ չարի վարձ կուտաս քեզ :

— « Գլխո՛ւս վերայ »

Եւր գընա ,

Բեր դու շուտով

Պրիկդ իմ քով » :

Գընաց այն Արջուկ ,

Բերաւ իւր ձագուկ :

Մէկ քանի օր իրաւ


Կապիկ լաւ նայեցաւ ,

Բայց օր մը այնչափ փախ թեց ,

Պրիկով՝ այնչափ սխմեց ,

Որ Արջուն տրդեկ

Վերջապէս խղդեց :



Բ.

Կատոն էս Մարիկ

« Բարի լից » քեզ »

Խառոյտ Սարեկ :

Ամէն աւետու ,  
Ո՛վ Սարեկ դու ,  
Մութ նուշուսուն  
Սիրուն սիրուն  
Ինչպէ՛ս կ'երգես ,  
Արդեօք դիտե՞ս » :  
Մէկ կատու պատին կռթնած •  
Սարեկին դէմ նրատած՝  
Այսպէս կը խօսէր ,  
Կը շողօքորթէր :  
« Ա՛խ , գայի ,  
Քեզ լսէի  
Այգուն այգուն , և դմայլէի  
Տեսքիդ ձայնիդ ըսքանչելի :  
Օ՛ն , քո դայլայլիկ  
Երգէ , ո՛վ Սարիկ » :  
Շողօքորթին այս սուտ խօսքէն  
Սարիկ ելած հոն ինքիրմէն՝  
Հազար տեսակ ձայն կը ձգէր ,  
Անուշ անուշ կը հստուղէր •

Լեռ ու ձորակ անտառ ամեն

Ար թ նդ ային նորա ձայնէն :

Բայց ի՛նչ դարմանք . երբ Սարիկ դեռ

Տաղեր կ'երգէր , ձայն կ'արձակէր ,

Կատուն յանկարծ ձայնեց .

« Մէկ քիչ կաց դու՛ Սարեկ ,

Այդ չ'եղաւ ,

Այդ չէ լաւ .

Այդ եղանակ շատ դէշ է ,

Անուշիկ չէ , սանկ նանկ է :

Կեցիր քովդ ելնեմ դամ ,

Նոր եղանակ քեզ ցոյց տամ » :

Ըսաւ .

Եկաւ :

Բայց երդ թ եղանակ

Ցոյց տալու նախատակ

Զունէր , դի երդ ին շէր .

Այլ Սարիկը մտադ իր էր

Խղղեւ

Ուտեւ .

Աւարի ճանկեց ,  
Խղիւնց լափեց :

Շողորրթներ նախ կը դպնեն ,  
Զով թէ քերթել երբ մըտադրեն :



Պ .

Թխամար Հառ

Ծերուկ մամա ի՞նչ ընէ ,  
Որ բաղեր շատցունէ .  
Թխամօր հաւուն տակ դաղտըկեկ .  
Կը դնէ բաղի ձուեր շատկեկ ,  
Որ թխսէ ,  
Բաղ հանէ :

Քիչ օրէն Թխամարն բաղի  
Շատ ճիւղեր կը ծընանի :  
Մամիկս որչափ  
Կ'ըլլայ ուրախ

Երբ կը տեսնէ խիտ խառնուածիկ  
Բաղի ձաղեր յոյժ խորտաիկ ,  
          Կուտ կը կըլլեն ,  
          Կը ցատկրանն :

Իսկ Թխամարուկն որչափ կ'ըլլար  
Ուրախ զուարթ , երբ կը տեսնար ,  
Որ ձաղեր կարգաւ կուգան .

Ըսինտուկ լաւ կը խաղան :

Բայց որ մը լըճի մը քով  
Թխամարուկն իր ձաղերով

          Երբ հասաւ ,

